

Հակիրճ ուղեցույց՝ «+374» առաջարկի շրջանակներում անհատական ֆինանսական ծառայությունների դիմումի ձևի լրացման

Հարգելի՛ Հաճախորդ,

Ձեզ ենք ներկայացնում «+374» առաջարկի շրջանակներում առաջարկվող անհատական ֆինանսական ծառայությունների դիմումի ձևի (այսուհետ՝ Դիմումի ձև) լրացման հակիրճ ուղեցույցը: Այստեղ ներառված են այն դրույթները, որոնք տեղ չեն գտել Դիմումի ձևի մեջ:

Նախքան Դիմումի ձևի լրացմանն անցնելը խնդրում ենք Ձեզ մանրամասն ծանոթանալ «Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին», «Քարտային ծառայությունների տրամադրման պայմաններին», «+374» առաջարկի շրջանակներում տրամադրվող ծառայությունների գործող սակագներին, ինչպես նաև «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող ընդհանուր «Ծառայությունների սակագներին»: Մտորագրելով Դիմումի ձևը՝ Դուք ընդունում եք վերը թվարկված բոլոր պայմանները և համաձայնվում անվերապահորեն հետևել դրանց:

Առաջարկվող ծառայություններ

Սույն Դիմումի ձևը Ձեզ հնարավորություն է տալիս միաժամանակ դիմելու հետևյալ ծառայություններից օգտվելու համար՝

- ▶ **Հաշիվներ:** Դուք կարող եք բացել մինչև 4 (չորս) տարբեր արժույթներով ընթացիկ կամ խնայողական հաշիվներ (Ուշադրություն: ՌԴ ռուբլիներով բացվում են միայն ընթացիկ հաշիվներ):
- ▶ **Բանկոմատային քարտեր:** Ձեր յուրաքանչյուր հաշվից Դուք կարող եք մեկական բանկոմատային քարտ պատվիրել Ձեզ համար:
 - ▶ Ձեր յուրաքանչյուր բանկոմատային քարտին կարող եք ամրագրել (կցել) երկուական լրացուցիչ հաշիվներ¹:
- ▶ **Հավելյալ բանկոմատային քարտեր:** Յուրաքանչյուր հաշվից, որի համար Դուք պատվիրել եք բանկոմատային քարտ, կարող եք պատվիրել մեկական հավելյալ քարտ Ձեր երկու շահառուների համար:
 - ▶ Յուրաքանչյուր հավելյալ բանկոմատային քարտին կարող եք ամրագրել (կցել) երկուական լրացուցիչ հաշիվներ¹:
Հավելյալ բանկոմատային քարտերը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համարվում են հաշիվների վարման նպատակով երրորդ անձանց տրված լիազորագրեր: Լիազորագրերը տրվում են Դիմումի լրացման օրվանից առավելագույնը 3 (երեք) տարի ժամկետով: Խնդրում ենք անպայմանորեն նշել լիազորագրերի վավերականության ժամկետները (տես՝ «Հավելյալ բանկոմատային քարտի պատվիրում» բաժնում «Հայտարարություն» պարբերությունը):
- ▶ **Վճարային քարտեր:** Դուք կարող եք դիմել մինչև 2 (երկու) վճարային քարտի՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:
- ▶ **Հավելյալ վճարային քարտեր:** Ձեր յուրաքանչյուր վճարային քարտի համար Դուք կարող եք պատվիրել մեկական հավելյալ վճարային քարտ Ձեր երկու շահառուների համար:

¹ Ամրագրված (կցված) լրացուցիչ հաշիվները սպասարկվում են միայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ ՀՀ տարածքում գործող բանկոմատներից:

- ▶ Վճարային քարտերի համար (և՛ առաջնային, և՛ հավելյալ) խնդրում ենք համապատասխան դաշտերում գրանցել գաղտնաբառեր, որոնք պետք է բաղկացած լինեն լատինական տառերից և արաբական թվերից, և յուրաքանչյուրը չպետք է գերազանցի 22 (քսաներկու) նիշը: Այս գաղտնաբառերը անհրաժեշտ են թե՛ զճի ծառայությունից օգտվելիս Ձեր և Հավելյալ քարտպանների անձերը հաստատելու համար:
- ▶ Հեռախոսային բանկային ծառայություն: Սույն Դիմումի ձևը ստորագրելով՝ Դուք ընդունում և համաձայն եք «Հեռախոսային կապի միջոցով ներկայացված հանձնարարականների կատարման համաձայնագրի» պայմաններին: Խնդրում ենք լրացնել Հավելված 3-ում ներկայացված՝ այս ծառայությանը գրանցվելու համար նախատեսված ձևը և փակ ծրարով ներկայացնել Բանկ²: Ծրարը պետք է Ձեր կողմից ստորագրված լինի՝ փակման երիզը հատելով:
- ▶ Հավելվածում պահանջվող գաղտնաբառը պետք է բաղկացած լինի լատինական տառերից և արաբական թվերից և պետք է պարունակի առնվազն մեկ մեծատառ և մեկ թվանիշ: Գաղտնաբառի նիշերի քանակը պետք է լինի առնվազն 8 (ութ), առավելագույնը՝ 20 (քսան): Ուշադրություն: Այս գաղտնաբառը չպետք է համընկնի վճարային քարտերի (թե՛ առաջնային, թե՛ հավելյալ) համար տրված գաղտնաբառերի հետ:
- ▶ Ինտերնետային բանկային ծառայություն: «+374» առաջարկի համար սահմանված տարեկան սպասարկման վճարը ներառում է նաև Ինտերնետային բանկային ծառայության գրանցման և սպասարկման վճարները: Այս ծառայությանը Դուք կարող եք գրանցվել օնլայն ռեժիմով Ձեր բանկոմատային քարտերը ստանալուց հետո, քանի որ դրա համար անհրաժեշտ է «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում գործող հաշվի առկայություն և այդ հաշվի համար թողարկված բանկոմատային քարտ: Ուստի խնդրում ենք՝ բանկոմատային քարտերը ստանալով՝ այցելել մեր ինտերնետային կայք (www.hsbc.am) և հետևելով կայքի ցուցումներին գրանցվել:

Առաքման հանձնարարականներ

Հաշվի առնելով առաջարկվող ծառայությունների բազմազանությունը և դրանց հետ կապված առաքումների պահանջների հնարավոր տարբերությունները՝ Ձեզ առաջարկում ենք հետևյալ առաքման տարբերակները որոշակի ծառայությունների համար՝

- ▶ Առաջնային քարտերի առաքման հանձնարարական: Եթե Դուք գտնվում եք ՌԴ-ում, ապա խնդրում ենք նշել առաքման հասցեն, իսկ եթե Դուք ներկայումս ՀՀ-ում եք, կարող եք ընտրել նաև մեր մասնաճյուղերից որևէ մեկից ստանալու տարբերակը:³
- ▶ Հավելյալ քարտերի առաքման հանձնարարական: Եթե Դուք և Հավելյալ քարտպանները գտնվում եք միևնույն երկրում (ՀՀ-ում կամ ՌԴ-ում), ապա խնդրում ենք նշել առաքել քարտերն ըստ առաջնային քարտերի առաքման հանձնարարականի: Հակառակ դեպքում՝ խնդրում ենք նշել «Տիգրան մեծ» մասնաճյուղից ստացման տարբերակը: Այդ պարագայում քարտերը Հավելյալ քարտպաններին կտրամադրվեն միայն նշված մասնաճյուղ անձամբ ներկայանալու և անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը ներկայացնելու դեպքում:
- ▶ Հաղորդակցման կարգի վերաբերյալ հանձնարարական: Սույն բաժնում սահմանվում է Բանկի և հաճախորդի միջև փաստաթղթային և տեղեկատվական բնույթի հաղորդակցման կարգը: Խնդրում ենք անպայմանորեն նշել այս բաժնում նախատեսված փոստային հասցեն, առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, այնուհետև՝ հաղորդակցման նախընտրելի եղանակը և պարբերականությունը:
- ▶ Ինտերնետային բանկային ծառայության անվտանգության սարքի առաքման հանձնարարական: Ինտերնետային բանկային ծառայություններից օգտվելու համար տրամադրվում է անվտանգության սարք, որի նպատակն է օնլայն համակարգում ձեր տվյալների համար լրացուցիչ պաշտպանվածություն ապահովելը: Այս սարքը Ձեզ կառաքվի համաձայն բերված հանձնարարականում նշված տարբերակի:

² Բանկ - «Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ կամ «Էյ-Էս-Բի-Սի Բանկ (ՌԴ)» ՍՊԸ

³ Վճարային քարտերը ենթակա են վերաթողարկման՝ համաձայն գործող պայմաններով սահմանված պարբերականության:

Վերաթողարկված առաջնային քարտերը կառաքվեն «Հաղորդակցման կարգի վերաբերյալ հանձնարարականում» նշված հասցեով:

Վերաթողարկված հավելյալ վճարային քարտերը կառաքվեն ըստ նույն հանձնարարականի, որը տրված է առաջին թողարկման հավելյալ քարտերի համար:

Պահանջվող փաստաթղթեր

Խնդրում ենք Ձեզ Դիմումի ձևի և դրան կից փաստաթղթերի (տես ստորև) լրիվ փաթեթի հետ միասին ներկայացնել նաև հետևյալ փաստաթղթերը՝

- ▶ Միջազգային անձնագրի բնօրինակ (բացակայության դեպքում՝ տեղական անձնագրի բնօրինակ)
- ▶ Սոցիալական քարտի բնօրինակ (առկայության դեպքում)⁴

Հավելյալ քարտերի պատվիրման համար անհրաժեշտ փաստաթղթեր

Եթե Դուք և Հավելյալ քարտապանները գտնվում եք միևնույն երկրում (ՀՀ-ում կամ ՌԴ-ում), ապա խնդրում ենք Ձեզ ներկայացնել Հավելյալ քարտապանների անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները: Այդ դեպքում վճարային քարտերի Հավելյալ քարտապանները պետք է Ձեզ հետ միասին ստորագրեն Դիմումի ձևը այն Բանկ ներկայացնելիս:

Եթե Դուք գտնվում եք ՌԴ-ում, իսկ Հավելյալ քարտապանները՝ ՀՀ-ում, ապա խնդրում ենք Ձեզ ներկայացնել Հավելյալ քարտապանների անձը հաստատող փաստաթղթերի միայն պատճենները: Այս դեպքում վճարային քարտերի Հավելյալ քարտապանների ստորագրությունների դաշտերը խնդրում ենք թողնել դատարկ:

Ծանուցում՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

Խնդրում ենք ծանոթանալ սույն ծանուցագրի հետ, որում ներկայացված են ՀՀ բանկերում ֆիզիկական անձանց ներդրած ավանդների երաշխավորման կարգն ու պայմանները:

Ուշադրություն՝: Դիմումի ձևի բոլոր էջերը պետք է ստորագրված լինեն Ձեր կողմից համապատասխան դաշտերում:

Դիմումի ձևին կից փաստաթղթեր

Անձնական հաշվի ստորագրության նմուշի քարտ: Սույն քարտով Դուք Բանկին թողնում եք Ձեր ստորագրության նմուշը, որով հետագայում կհաստատվի/կվավերացվի Ձեր կողմից Բանկ ներկայացրած ցանկացած գրավոր հանձնարարական: Խնդրում ենք քարտը ստորագրել Հաճախորդի ստորագրության համար նախատեսված ուղղանկյան մեջ առանց հատելու դրա սահմանները:

Ստորագրության նմուշի արդիականացման ձև: Ձեր ներկայիս ստորագրությունը անձնագրի ստորագրությունից տարբերվելու դեպքում խնդրում ենք լրացնել սույն փաստաթուղթը, որով դուք կհայտարարեք Ձեր ստորագրության փոփոխման մասին՝ հանձնարարելով Բանկին ընդունել ի կատարման միայն Ձեր նոր ստորագրությամբ վավերացված հանձնարարականները:

⁴ Սոցիալական քարտը պահանջվում է՝ կախված հաճախորդի՝ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ռեզիդենտության կարգավիճակից: Ձեր ռեզիդենտության կարգավիճակը որոշվում է՝ համաձայն Դիմումի ձևին կից «Կացության կարգավիճակի հայտարարագրի» (հավելված 2), ըստ որի Դուք հանդիսանում եք ՀՀ ռեզիդենտ, եթե Ձեր կացության կարգավիճակը համապատասխանում է նշված հայտարարագրի 1-ին կամ 3-րդ կետերին: